

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

06.05.2011

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ,

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի եւ անձամբ իմ կողմից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ յուրաքանչյուրիս համար նվիրական դարձած Մայիսյան փառահեղ Եռատոնի կապակցությամբ:

Հայոց աշխարհն այսօր լուսավորված է Մայիսյան Հաղթանակների կենսաբեր շողերով եւ ապրում է ազատ ու խաղաղ կյանքի անխաթար ու կայուն առաջընթացի, բոլորիս կյանքում առկա դժվարությունների աստիճանական հաղթահարման շրջանում:

Տոնական բարեմաղթանքներով ցանկանում եմ բոլորիդ քաջատողջություն, անձնական երջանկություն եւ հետագա հաջողություններ Ձեր բոլոր ծրագրերի իրականացման գործում: Թող Մայիսյան Հաղթանակների ոգին համակի եւ ուղեկցի Ձեզ ողջ կյանքում:

Բարին ընդ Ձեզ:

*Լավագույն ցանկություններով*

*ՀՀ Արմավիր մարզպետ՝  
Աշոտ Սարգսի Ղահրամանյան*